ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ----------2016թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Թույլատրել Երևանի քաղաքապետին.

1. Քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային շենքերից վերաբնակեցնելու նպատակով՝ կից հավելվածում նշված քաղաքացիներին, անհատույց օտարել (նվիրել) բնակարաններ՝ Շինարարների փողոցի հ.6/1 և հ.15 հասցեներում գտնվող նոր կառուցված շենքերից։
2. Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.127/1 չորրորդ կարգի վթարային շենքի հ.24/1 և հ.25/3 հասցեներում գտնվող սեփականության իրավունքով համապատասխանաբար Մեսրոպ Հարությունյանին և Արման Բարեգամյանին պատկանող հասարակական տարածքները /համաձայն հավելվածի/ փոխանակել Շինարարների փողոցի հ.6/1 և հ.15 հասցեներում Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող նոր կառուցված շենքերի բնակարանների հետ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Շինարարների փողոցի հ.6/1 և հ.15 հասցեներում գտնվող նոր կառուցված բնակելի շենքերում վերաբնակեցնել Երևան քաղաքում առկա 4-րդ կարգի վթարային Բրյուսովի փողոցի հ.66, Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.127/1 և Արցախի 4-րդ նրբանցքի հ.10/2 հանրակացարանային շենքերի բնակիչներին, ինչպես նաև Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.127/1 շենքի 1-ին հարկի հասարակական շինությունների սեփականատերերին՝ համաձայն հավելվածի։

ՀՀ կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի «Երևան քաղաքում քանդման ենթակա վթարային հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչներին բնակարաններ հատկացնելու կարգը հաստատելու մասին» 172-Ն որոշմամբ կարգավորվում են քանդման ենթակա վթարային հանրակացարանային շենքերի բնակիչների վերաբնակեցման հետ կապված իրավահարաբերությունները։

Որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ կից հավելվածում նշված քաղաքացիները՝ վտանգելով իրենց կյանքն ու առողջությանը, դեռևս բնակվում կամ գործունեություն են ծավալում վթարային շենքերում։ Այդ շենքերը գտնվում են փլուզման սպառնալիքի տակ և անկանխատեսելի հետևանքներից խուսափելու նպատակով, քաղաքացիների հետ կատարված բանակցությունների արդյունքում, պայմանավորվածություն է ձեռք բերվել հավելվածում նշված ընտանիքներին վերաբնակեցնել և տրամադրել նոր բնակարաններ, իսկ հասարակական տարածքների դեպքում՝ փոխանակել բնակարանների հետ։

Ստորև ներկայացվում է յուրաքանչյուր ընտանիքի անհատական տվյալների նկարագիրը։

Քաղաքացիներ՝ Ալվարդ Ղազարյանը, Սոֆիկ Սուքիասյանը, Արևիկ Ղազարյանը, Սումբատ Ղազարյանը, Եղիշե Ղազարյանը և Էդմոն Ղազարյանը /ընդհանուր 6 անձ/ 1983 թվականից հաշվառված և փաստացի բնակվում են 4-րդ կարգի վթարային Բրյուսովի փողոցի հ.66 շենքի հ.3 բնակարանում /24.12.2015թ «Կենտրոն» վարչական շրջանի հ.8 տեղամասի տեղեկանք/։

Նշված ընտանիքը համաձայնություն է տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.6/1 շենքում, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները։

Քաղաքացիներ՝ Շայնիկ Սիմիտյանը, Հմայակ Բաբագուլյանը, Ռոբերտ Սիմիտյանը, Էլիզա Բաբագուլյանը, Արեն Սիմիտյանը, Գուրգեն Սիմիտյանը և Էդգար Գալստյանը /ընդհանուր 7 անձ/ 1990 թվականից հաշվառված և փաստացի բնակվում են 4-րդ կարգի վթարային Բրյուսովի փողոցի հ.66 շենքի հ.7 բնակարանում /հիմք՝ 16.11.2015թ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին հ.503160 տեղեկանք, 23.11.2015թ «Կենտրոն» վարչական շրջանի հ.8 տեղամասի տեղեկանք/։

Նշված քաղաքացիները համաձայնություն են տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.6/1 շենքում, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները։

Քաղաքացիներ՝ Կնյազ Հարությունյանը, Ալինա Համբարձումյանը, Նելլի Ղազարյանը,Կատյա Հարությունյանը և Դավիթ Հարությունյանը /ընդհանուր 5 անձ/ 2010 թվականից հաշվառված և փաստացի բնակվում են 4-րդ կարգի վթարային Բրյուսովի փողոցի հ.66 շենքի հ.11 բնակարանում /հիմք՝ 19.11.2015թ «Կենտրոն» վարչական շրջանի հ.8 տեղամասի տեղեկանք/։

Նշված ընտանիքը համաձայնություն է տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.6/1 շենքում, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները։

Քաղաքացի՝ Լիդա Սուքիասյանը /ընդհանուր 1 անձ/ 2011 թվականից հաշվառված և փաստացի բնակվում է 4-րդ կարգի վթարային Բրյուսովի փողոցի հ.66 շենքի հ.17 բնակարանում /հիմք՝ 18.11.2015թ «Կենտրոն» վարչական շրջանի հ.8 տեղամասի տեղեկանք /։

Քաղաքացին համաձայնություն է տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.6/1 շենքում, սակայն տվյալ դեպքում բացակայում է Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները*։*

Քաղաքացիներ՝ Համեստ Հարությունյանը, Կամսար Մնացականյանը և Գագիկ Մնացականյանը /ընդհանուր 3 անձ/ 2004 թվականից հաշվառված և փաստացի բնակվում են 4-րդ կարգի վթարային Բրյուսովի փողոցի հ.66 շենքի հ.18 բնակարանում /հիմք՝ 19.11.2015թ «Կենտրոն» վարչական շրջանի հ.8 տեղամասի տեղեկանք/։

Նշված ընտանիքը համաձայնություն է տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.6/1 շենք, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները*։*

Քաղաքացիներ՝ Աշոտ Պողոսյանը, Կարինա Պողոսյանը և Դիանա Պողոսյանը /ընդհանուր 3 անձ/ 1989 թվականից հաշվառված և փաստացի բնակվում են 4-րդ կարգի վթարային Բրյուսովի փողոցի հ.66 շենքի հ.4 բնակարանում /հիմք՝ 02.12.2015թ. «Կենտրոն» վարչական շրջանի հ.8 տեղամասի տեղեկանք/։

Նշված ընտանիքը համաձայնություն է տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.15 շենքում, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները*։*

Քաղաքացիներ՝ Եվգենյա Ղազարյանը, Ալինա Ղազարյանը, Մարիամ Ղազարյանը, Սաթեն Միքայելյանը և Էլեն Հովհաննիսյանը /ընդհանուր 5 անձ/ 1988 թվականից հաշվառված և փաստացի բնակվում են 4-րդ կարգի վթարային Բրյուսովի փողոցի հ.66 շենքի հ.1 բնակարանում /հիմք՝ 18.11.2015թ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին հ.503170 տեղեկանք, 18.11.2015թ. «Կենտրոն» վարչական շրջանի հ.8 տեղամասի տեղեկանք/։

Նշված ընտանիքը համաձայնություն է տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.6/1 շենքում, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները*։*

Քաղաքացիներ՝ Վիտալյա Գալոյանը, Մարիաննա և Ռաֆֆի Պասկևիչյանները /ընդհանուր 3 անձ/ փաստացի 1997 թվականից բնակվում են 4-րդ կարգի վթարային Արցախի 4-րդ նրբանցքի հ.10/2 շենքի հ.10 բնակարանում /հիմք՝ «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի 30.10.2015թ հ.435 տեղեկանք, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, Շենգավիթի անձնագրային բաժանմունքի 02.10.2015թ հ.28/10-15999 գրություն/։

Նշված ընտանիքը համաձայնություն է տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.6/1 շենքում, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները*։*

Քաղաքացիներ՝ Անահիտ Գրիգորյանը, Գոռ Գրիգորյանը և Նարեկ Գրիգորյանը /ընդհանուր 3 անձ/ 2007թ. հաշվառված և փաստացի բնակվում են 4-րդ կարգի վթարային Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.127/1 շենքի հ.23 բնակարանում /հիմք՝ «Լույս» համատիրության 21.01.2016թ տեղեկանք/։

Նշված ընտանիքը համաձայնություն է տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.15 շենքում, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները։

Քաղաքացիներ՝ Հրաչյա Գրիգորյանը, Կարինա Գրիգորյանը, Մելանիա Գրիգորյանը, Աննա Գրիգորյանը, Վահրամ Գրիգորյանը և Վարդան Գրիգորյանը /ընդհանուր 6 անձ/ 2003թ.

հաշվառված և փաստացի բնակվում են 4-րդ կարգի վթարային Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.127/1 շենքի հ.16 բնակարանում /հիմք՝ «Լույս» համատիրության 21.01.2016թ տեղեկանք/։

Նշված ընտանիքը համաձայնություն է տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.15 շենքում, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները։

Քաղաքացիներ՝ Սիլվա Հակոբյանը, Ալեքսան Չապարյանը, Հայկ Գրիգորյանը, Ռոբերտ Գրիգորյանը և Անահիտ Գրիգորյանը /ընդհանուր 5 անձ/ 2006թ. հաշվառված և փաստացի բնակվում են 4-րդ կարգի վթարային Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.127/1 շենքում գտնվող բնակելի տարածքում /հիմք՝ «Լույս» համատիրության 21.01.2016թ տեղեկանք/։

Նշված ընտանիքը համաձայնություն է տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.6/1 շենքում, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները։

Քաղաքացիներ՝ Ֆլորա Չապարյանը, Սիլվա Միլիտոնյանը, Թամարա Միլիտոնյանը և Հենրիկ Չապարյանը /ընդհանուր 4 անձ/ 2005թ. հաշվառված և փաստացի բնակվում են 4-րդ կարգի վթարային Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.127/1 շենքում գտնվող բնակելի տարածքում /հիմք՝ «Լույս» համատիրության 21.01.2016թ տեղեկանք/։

Նշված ընտանիքը համաձայնություն է տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.6/1 շենքում, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները։

Քաղաքացի՝ Մեսրոպ Հարությունյանը հանդիսանում է 4-րդ կարգի վթարային Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.127/1 շենքի հ.24/1 հասցեում գտնվող հասարակական նշանակության տարածքի սեփականատերը/ հիմք՝անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.13112013-01-0270 վկայական/։ Վերջինիս հետ կատարված բազմաթիվ քննարկումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել վթարային շենքի 1-ին հարկում գտնվող տարածքը /գործող խանութ/ փոխանակել Շինարարների փողոցի հ.6/1 շենքում գտնվող հ. 97 և հ.98 մեկ սենյականոց բնակարանների հետ։

Քաղաքացի՝ Արման Բարեգամյանը հանդիսանում է 4-րդ կարգի վթարային Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.127/1 շենքի հ.25/3 հասցեում գտնվող հասարակական նշանակության տարածքի սեփականատերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.28042012-01-0629 վկայական/։ Վերջինիս հետ կատարված բազմաթիվ քննարկումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել վթարային շենքի 1-ին հարկում գտնվող տարածքը /գործող սպասարկման սրահ/ փոխանակել Շինարարների փողոցի հ.15 շենքում գտնվող հ. 119 երկու սենյականոց բնակարանի հետ։

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննարկվող դեպքերով բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել գործող կարգի համաձայն 4-րդ կարգի վթարային Բրյուսովի փողոցի հ.66, Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.127/1 և Արցախի 4-րդ նրբանցքի հ.10/2 հանրակացարանային շենքերի բնակիչներին վերաբնակեցնելու, ինչպես նաև Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.127/1 շենքի 1-ին հարկի ոչ բնակելի տարածքների սեփականատերերի զբաղեցրած տարածքներն ազատելու և Երևան համայնքին հանձնելու համար ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու և փոխանակելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում։

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու և փոխանակելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
,,_____,,_____ 2016թ. N_____-Ա որոշում

Ց Ա Ն Կ

ՎԵՐԱԲՆԱԿԵՑՎՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՎ ՓՈԽԱՆԱԿՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

հ/հ	Անուն Ազգանուն	Վթարային շենքի բնակարանի հասցեն	Կառուցվածքը /սենյակների թիվը/	Տրամադրվող բնակարանի հասցեն	Կառուցվածքը /սենյակների թիվը/	Ծանոթություն
1	Ալվարդ Ղազարյան Սոֆիկ Սուքիասյան Արևիկ Ղազարյան Սումբատ Ղազարյան Եղիշե Ղազարյան Էդմոն Ղազարյան	Բրյուսովի փողոցի հ.66 շենքի հ.3	2	Շինարարների փողոցի հ.6/1 շենքի հ.32	2	
2	Շայնիկ Սիմիտյան Հմայակ Բաբագուլյան Էլիզա Բաբագուլյան Արեն Սիմիտյան Գուրգեն Սիմիտյան Էդգար Գալստյան Ռոբերտ Սիմիտյան	Բրյուսովի փողոցի հ.66 շենքի հ.7	2	Շինարարների փողոցի հ.6/1 շենքի հ.38	2	
3	Կնյազ Հարությունյան Ալինա Համբարձումյան Նելլի Ղազարյան Կատյա Հարությունյան Դավիթ Հարությունյան	Բրյուսովի փողոցի հ.66 շենքի հ.11	2	Շինարարների փողոցի հ.6/1 շենքի հ.44	2	
4	Լիդա Սուքիասյան	Բրյուսովի փողոցի հ.66 շենքի հ.17	1	Շինարարների փողոցի հ.6/1 շենքի հ.80	1	
5	Համեստ Հարությունյան Կամսար Մնացականյան Գագիկ Մնացականյան	Բրյուսովի փողոցի հ.66 շենքի հ.18	1	Շինարարների փողոցի հ.6/1 շենքի հ.75	1	
6	Աշոտ Պողոսյան Կարինա Պողոսյան	Բրյուսովի փողոցի հ.66 շենքի հ.4	1	Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.հ 139 և 140	1	
	Դիանա Պողոսյան		3		2	

7	Սաթեն Միքայելյան Մարիամ Ղազարյան	Բրյուսովի փողոցի հ.66 շենքի հ.1	1	Շինարարների փողոցի հ.6/1 շենքի հ.հ 92,93	1	
	Եվգենյա Ղազարյան Էլեն Հովհաննիսյան Ալինա Ղազարյան		2		2	
8	Վիտալյա Գալոյան Մարիաննա Պասկևիչյան Ռաֆֆի Պասկևիչյան	Արցախի 4-րդ նրբանցք հ,10/2 շենքի հ.10	4	Շինարարների փողոցի հ.6/1 շենքի հ.14	3	
9	Անահիտ Գրիգորյան Գոռ Գրիգորյան Նարեկ Գրիգորյան	Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.127/1 շենքի հ.23	1	Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.32	1	
10	Հրաչյա Գրիգորյան Կարինա Գրիգորյան Մելանիա Գրիգորյան Աննա Գրիգորյան Վահրամ Գրիգորյան Վարդան Գրիգորյան	Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.127/1 շենքի հ.16	1	Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.38	1	
11	Սիլվա Հակոբյան Ալեքսան Չապարյան Ռոբերտ Գրիգորյան Անահիտ Գրիգորյան Հայկ Գրիգորյան	Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.127/1 շենքում գտնվող բնակելի տարածք	1	Շինարարների փողոցի հ.6/1 շենքի հ.62	1	
12	Ֆլորա Չապարյան Սիլվա Միլիտոնյան Թամարա Միլիտոնյան Հենրիկ Չապարյան	Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.127/1 շենքում գտնվող բնակելի տարածք	1	Շինարարների փողոցի հ.6/1 շենքի հ.91	1	
13	Մեսրոպ Հարությունյան	Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.127/1 շենքի հ.24/1	խանութ	Շինարարների փողոցի հ.6/1 շենքի հ.հ 97,98	1 և 1	
14	Արման Բարեգամյան	Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.127/1 շենքի հ.25/3	Սպասարկման սրահ	Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.119	2	